

Կարծիք

Ներսես Նորայրի Ներսիսյանի «Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացման ուղիները /ՀՀ օրինակով/» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Արենախոսության թեմայի արդիականությունը

Ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ աշխարհի շատ երկրներում գյուղատնտեսությունը տնտեսության առանցքային ոլորտներից է, որից առավելապես կախված երկրի պարենային անվտանգությունը, ինչն ավելի է կարևորում ոլորտի դերը, հատկապես երկրի կայուն զարգացման համատեքստում: Միևնույն ժամանակ, գյուղատնտեսությունը ներառվում է բարձր ռիսկայնություն ունեցող տնտեսական գործունեության տեսակների շարքին, քանի որ անընդհատ ենթարկվում է բնական, հաճախ անկանխատեսելի, տարերային աղետների ներգործությանը՝ առաջացնելով համակարգային ռիսկեր, որոնց կառավարումն էականորեն նպաստում է ոլորտի անխափան գործունեությանը: Գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարման արդյունավետ գործիքներից է ապահովագրությունը, որը տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն է տալիս տարատեսակ ռիսկերի ի հայտ գալու դեպքում ստանալ համապատասխան փոխհատուցում և ապահովել գործունեության անընդհատությունը:

Որպես գյուղատնտեսության բնագավառին բնորոշ ռիսկեր կարող ենք նշել բնական աղետները (երաշտ, ցրտահարություն, կարկտահարություն), զանազան հիվանդությունները, վնասատուները, շուկայական տատանումները և այլն: Վերջիններիս ի հայտ գալու դեպքում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարողներին և ֆերմերներին ֆինանսական երաշխիքներ է տրամադրում գյուղատնտեսության ապահովագրությունը: Այն հնարավորություն է տալիս մեղմելու ռիսկերը՝ առաջարկելով ֆինանսական աջակցություն բերքի, անասունների կորուստների կամ սարքավորումների վնասման դեպքերում:

Լինելով ռազմավարական նշանակության ոլորտ, ՀՀ-ում նույնպես գյուղատնտեսությունը գերծ չէ վերը հիշատակված տարատեսակ ռիսկերից, որոնք խնդիրներ են ստեղծում ոչ միայն գյուղատնտեսությամբ զբաղվողների, այլ նաև կառավարության համար: Հետևաբար

գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության և շահութաբերության բարձրացմանը, և առհասարակ արդյունավետության բարելավմանը հնարավոր է հասնել ռիսկերի կառավարման համապատասխան և ճկուն գործիքներ կիրառելով: Հաշվի առնելով ոլորտին առնչվող ռիսկերի բարձր մակարդակը՝ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը ծախսատար ապահովագրության տեսակ է, որը հնարավոր չէ պատկերացնել առանց պետական աջակցության, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հեղազոտության նպատակներն ու խնդիրները

Սույն ատենախոսության նպատակն է բացահայտել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության արդի վիճակը, և զարգացման մարտահրավերները՝ ներկայացնելով պետական աջակցության համակարգի կատարելագործման արդյունավետ ուղիներ:

Ատենախոսության սահմանված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

- ✓ ուսումնասիրել գյուղատնտեսության ոլորտի առկա ռիսկերը, տեսակները և կառավարման հնարավոր տարբերակները,
- ✓ վերլուծել գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձը և ոլորտում կիրառված գործիքակազմերը,
- ✓ հետազոտել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության իրավական դաշտը, ոլորտում առկա խնդիրները,
- ✓ ուսումնասիրել ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության հնարավոր կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները և հակակոռուպցիոն քաղաքականությունը,
- ✓ բացահայտել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի բնականոն գործունեությունից հնարավոր շեղումները, առանձնահատկությունները,
- ✓ բացահայտել կենդանիների, հատկապես մեղվաբուծության ապահովագրության զարգացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում,
- ✓ առանձնացնել ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության համակարգի կատարելագործման և պետական աջակցության զարգացման հնարավոր ուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության ոլորտն է, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացումը, ինչպես նաև կառավարման հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղիների մշակումը:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Առենախոսության ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առանձնացվել են հետևյալ գիտական նորույթները.

✓ սեզոնային ինդեքսների և վիճակագրական ցուցանիշների հիման վրա կատարվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատում, որի շրջանակներում կոռելյացիոն վերլուծության հիման վրա գնահատվել է ամենապահանջված պրոդուկտների՝ խաղողի և ծիրանի գծով ապահովագրության փոփոխության ազդեցությունը պիլոտային ծրագրի արդյունավետության վրա,

✓ անասնաբուծության ապահովագրության մեկնարկային կետ առանձնացնելով ոլորտում գործող սուբսիդավորման նախագծերը, գնահատվել է անասնաբուծության ոլորտում նորարարական տեխնոլոգիաների, այդ թվում՝ խելացի անասնաշենքերի ներդրման արդյունավետությունը և նպաստումն ոլորտի զարգացման ու ապահովագրական ծրագրերի իրականացման գործընթացներում,

✓ որպես ելակետ ընդունելով մեղվաբուծության ոլորտում մեղրի մնացորդի տվյալները, մշակվել է մեղվաբուծության ապահովագրության ներդրման կառուցակարգ, իսկ կլաստերային վերլուծության միջոցով առանձնացվել են «առավել մոտ» մարզերը՝ օպտիմալ ռեսուրսային ծախսերի ու արդյունավետ ապահովագրության ծրագիր իրականացնելու նպատակով,

✓ լոգարիթմական մոդելի միջոցով գնահատվել է առանց պետական աջակցության ֆերմերների՝ մեղվաբուծության ոլորտում ապահովագրությանը վճարելու պատրաստակամությունը և մշակվել է ապահովագրական մոդելի կիրառության մեթոդաբանություն, որն ապացուցում է ոլորտի բարձր ռիսկայնությունը և ցույց է տալիս, որ առանց պետական սուբսիդավորման ապահովագրավճարների արդյունավետ համակարգի ներդրումը գրեթե անհնար է:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվում են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը և գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվում է հետազոտության արդյունքների գործնական արժեքավորությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Գյուղատնտեսության ոլսկերի ապահովագրության ընդհանուր բնութագիրը և հայեցակարգերը»** գլխում բացահայտվում է գյուղատնտեսության ոլսկերի տեսական հիմքը՝ դրանց տեսակների, բնույթի և առաջացման պատճառների վերլուծությամբ: Համակողմանիորեն անդրադարձ է կատարվել միջազգային փորձին՝ ներկայացնելով գյուղատնտեսական ապահովագրության մոդելները, կառուցվածքն ու գործիքակազմը տարբեր երկրների օրինակներով: Այս բաժնում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել պետական աջակցության դերակատարությանը՝ ցույց տալով, որ առանց պետական միջամտության ապահովագրական համակարգն ունի զարգացման դժվարություններ և խոչընդոտներ: Գլուխը եզրափակվում է Հայաստանի Հանրապետությունում գործող պետական աջակցության համակարգի վերլուծությամբ՝ ներկայացնելով դրա կառուցվածքային առանձնահատկությունները, կիրառական խնդիրներն ու զարգացման հնարավոր ուղղությունները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Գյուղատնտեսության ոլսկերի ապահովագրության կարգավորումը և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում կատարվել է ոլորտի կարգավորման կառուցվածքի և օրենսդրական դաշտի համապարփակ ուսումնասիրություն: Վերլուծվել է ՀՀ-ում գործող ապահովագրական քաղաքականության հիմնական ուղղությունները, ուսումնասիրել ոլորտի կառավարման գործիքները և առկա թերությունները: Ներկայացվել են նաև կոռուպցիոն ոլսկերը գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում՝ դիտարկելով դրանց հնարավոր ազդեցությունը համակարգի արդյունավետության և պետական սուբսիդավորման գործընթացների վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ-ում ոլսկերի ապահովագրության կառավարման հիմնախնդիրները և զարգացման հիմնական ուղիները»** գլխում ներկայացվել են գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղղություններն ու գործնական լուծումները: Առանձնացվել է կենդանիների և մեղվաբուծության ապահովագրության զարգացման հնարավոր տարբերակներ՝ առաջարկելով դրանց ներդրման մոդելներ և

ներդրումային հաշվարկներ: Մասնավորապես՝ մշակվել է մեղվաբուծության ապահովագրության կառուցակարգ, որն արտացոլում է կլաստերային վերլուծության արդյունքները, և գնահատվել է անասնաբուծության ոլորտում «խելացի անասնաշենքերի» ներդրման արդյունավետությունը՝ ապահովագրության զարգացման խթանման տեսանկյունից: Բացի այդ, ներկայացվել են գյուղատնտեսական ապահովագրության կատարելագործման ռազմավարական մոտեցումներ, որոնք ուղղված են համակարգի ֆինանսական կայունության և ֆերմերների մասնակցության խթանմանը: Սեզոնային ինդեքսների և վիճակագրական ցուցանիշների հիման վրա կատարվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատում:

Աշխատանքի արդյունքների հիման վրա ներկայացվում են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Դիփոդություններ ատենախոսության վերաբերյալ

Կատարված ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից, որոնցից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսն աշխատանքում բավական ծավալուն անդրադարձ է կատարել վերջին տարիներին որպես պիլոտային ծրագիր ներդրված գյուղապահովագրությանը, ինչպես նաև այն համակարգող կառույցի ԳԱԱԳ-ի (գյուղատնտեսության ապահովագրության ազգային գործակալություն) գործունեությանը: Աշխատանքն ավելի կշահեր, եթե մանրամասն անդրադարձ կատարվեր վերջին երկու տարիների ոլորտի անկման (կնքված պայմանագրերի, հավաքագրած ապահովագրավճարների և հատուցումների գծով ցուցանիշների էական նվազման) պատճառներին, մասնավորապես միջազգային վարկանիշ ունեցող վերաապահովագրողների շուկայից «դուրս գալուն», 2023թ-ի ցուցանիշներով հատուցումների շեշտակի աճի բուն պատճառներին և այլն:

2. Հայտի է, որ բուսաբուծության համեմատությամբ անասնապահության ճյուղի ապահովագրության իրականացումը շատ ավելի բարդ ու ռիսկային է՝ պայմանավորված հատկապես մեքենայությունների ռիսկի զսպման (կենդանիների և դրանց կորուստների հաշվառման) բարդություններով: Թեև աշխատանքում անասնապահության ճյուղի մասով իրականացված վերլուծություններն ու առաջարկված մեխանիզմները կարևոր են ու պիտանի, սակայն մեքենայությունների կամ խարդախությունների մասով անհրաժեշտ վերլուծությունների

և դրանց արդյունքում համապատասխան կառուցակարգերի առաջարկումը կատարելագործման կարիք ունի:

3. Գյուղապահովագրության ոլորտի հիմնական շահառու ֆերմերներն ու գյուղական բնակչությունը հաճախ ապահովագրության կարևորության գիտակցման, ինչպես նաև այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ «առանձնացնելու» խնդրի առաջ են կանգնած: Ուստի ցանկալի կլիներ ի թիվս ներկայացվածների, ուսումնասիրել ու առաջարկել այլ մեխանիզմներ ևս՝ ապահովագրությունը գրավիչ դարձնելու, ֆերմերներին «ապահովագրության դաշտ» բերելու, մասնավորապես օրինակ ապահովագրության պայմանագրի առկայությունը տարբեր պետական, սուբսիդիոն, վարկավորման և այլ ծրագրերում որպես առաջնային խաղաքարտ օգտագործելու առումով:

4. Ապահովագրության համակարգի կայուն և արդյունավետ զարգացման գործում էական նշանակություն ունի ապահովագրական հիմնավորված սակագների կիրառումը, որի հիմքը հավաստի տվյալների և տեղեկատվության հավաքագրումն է: Հաշվի առնելով ոլորտում առկա տվյալների հավաստիության առումով խնդրահարույց լինելը (Աշխատանքի 3.1 պարագրաֆում կենդանիների անկման վերաբերյալ բերված տվյալներն ակնհայտորեն շեղված են իրականությունից)՝ ցանկալի կլիներ ապահովագրության համակարգը դիտարկել նաև որպես այդ անհրաժեշտ տվյալները և տեղեկատվությունը ճշգրտող, համապատասխան տվյալների բազա հավաքագրող արդյունավետ մեխանիզմ կամ գործիք, ինչն էլ հետագայում հիմք կհանդիսանար գյուղատնտեսության ապահովագրության հաջող ներդրման ու զարգացման գործում:

Եզրակացություն

Ներկայացված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը և հետազոտության ընթացքում ստացված արդյունքների նշանակությունը:

Ներսես Նորայրի Ներսիսյանի «Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացման ուղիները /<< օրինակով/» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և ամփոփ հետազոտություն է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի տպագրված 9 գիտական հոդվածներում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Ներսես Նորայրի Ներսիսյանի «Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացման ուղիները /<< օրինակով/» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «<< գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ գլխավոր տնօրեն,

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ա. Դադունց


ԱՐՄԱՆ ՍԱՍՈՒՆԻ ԴԱՂՈՒՆՑԻ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ

Անձնակազմի կառավարման պատասխանատու՝

Ա. Ղարիբյան



«06» փետրվարի 2026թ.